«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 11

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով 2022-2023 ուսումնական տարվանից սկսած համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների կողմից սպասարկվող համակարգչային հմտությունների, ինֆորմատիկայի, ծրագրային ապահովման տարբեր միջոցների, համակարգչային գրաֆիկայի, տվյալների մշակման ու վերլուծության, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, մոդելավորման, էկոնոմետրիկայի և վիճակագրական դասընթացների լաբորատոր պարապմունքների բաղադրիչը գործնական պարապմունքների բաղադրիչին միացնելու մասին հարցը, **արձանագրելով,** որ նշյալ 3 ամբիոնների կողմից սպասարկվող դասընթացների լաբորատոր և գործնական պարապմունքների բաղարիչները միացնելու նպատակահարմարության մասին հարցը քննարկվել և համաձայնեցվել է տվյալ ամբիոնների վարիչների հետ և հաստատման է երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **2022-2023** ուսումնական տարվանից սկսած համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի, վիճակագրության ու տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնների կողմից սպասարկվող համակարգչային հմտությունների, ինֆորմատիկայի, ծրագրային ապահովման տարբեր միջոցների, համակարգչային գրաֆիկայի, տվյալների մշակման ու վերլուծության, տնտեսամաթեմատիկական մոդելավորման, մոդելավորման, էկոնոմետրիկայի և վիճակագրական դասընթացների լաբորատոր պարապմունքների բաղադրիչը միացնել գործնական պարապմունքների բաղադրիչին:
2. Հանձնարարել բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող համալսարանի բոլոր ամբիոններին՝ մինչև **2022 թվականի փետրվարի 25-ը** առկա և հեռակա կրթաձևերի բոլոր բակալավրական և

մագիստրոսական գործող ուսումնական պլաններում կատարել համապատասխան փոփոխություններ և հաստատման ներկայացնել փոփոխված ուսումնական պլանները:

3. Տվյալ դասընթացների գործնական դասաժամերին ակադեմիական խմբերը կիսել համալսարանում ակադեմիական խումբը գործնական խմբերի կիսելու հաստատված նորմատիվով:
4. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2022-2023** ուսումնական տարվա համար մինչև 2022 թվականի մայիսի 30-ը բոլոր վերահաստատված ուսումնական պլանների համապատասխան մոդուլներում կատարել սույն որոշմամբ հաստատված փոփոխությունները:
5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան